

Մ. Մկրյան

ԱՌԱՆ ԿՈՆՑԵՊՏԻԱՆԵՐ 19-րդ ԴԱՐԻ 50—60-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ՀԱՅ ՌԵՎՈԼՅՈՒՑԻՈՆ-ԴԵՄՈԿՐԱՏՆԵՐԻ ԵՎ ԼԻԲԵՐԱԼՆԵՐԻ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵՋ

Սովետահայ գրականագիտությունը և պատմագիտությունը կատարել են որոշ արժեքավոր աշխատանք 19-րդ դարի 50—60-ական թվականների հայ հասարակական հոսանքների և գրականության պատմության ուսումնասիրման գործում: Սակայն մեր գիտական աշխատողների մի մասի իդեոլոգիական, քաղաքական կոփվածքի ու տեսական ցածր մակարդակի հետևանքով լուրջ սխալներ են թույլ տրվել նրանց առանձին, ինչպես և մեր գիտա-հետազոտական և ուսումնական հիմնարկների որոշ աշխատողներին մեջ:

Հայաստանի Կոմունիստական պարտիայի 16-րդ համագումարում այդ սխալներին ու նրանց բնույթին հատուկ անդրադարձավ Կենտրոնական Կոմիտեի քարտուղար ընկ. Գր. Հարությունյանը, Հայաստանի Կ(Բ)Պ Կենտրոնական Կոմիտեի աշխատանքի մասին՝ իր հաշվետու զեկուցման մեջ: Անդրադառնալով Դիտ. ակադեմիայի Գրականության ինստիտուտի աշխատանքներում տեղ գտած գաղափարական սխալներին, ընկ. Գր. Հարությունյանը միանգամայն ճիշտ նշեց, որ հայ գրականության պատմության դասագրքի հեղինակներից ի. Սարգսյանը «աշխատում է ամեն կերպ մեղմացնել այն արմատական տարբերությունները, որոնք գոյություն են ունեցել Մ. Նալբանդյանի ռևոլյուցիոն դեմոկրատիզմի և Մտ. Նազարյանցի բուրժուական լիբերալիզմի միջև, այդ ժամանակաշրջանի հայ գրականության բոլոր հիմնական հարցերը հանգեցնելով ազգային-ազատագրական շարժման, լուծյան մատնելով այն հարցերը, որոնք կապված են եղել դասակարգային պայքարի և առանձին խմբերի ու հասարակական հոսանքների միջև մղվող պայքարի հետ»:

«Միասնական հոսանքի» կոնցեպցիայի մի արտահայտություն հանդիսացող այս սխալի մատնանշումը ընկ. Գր. Հարությունյանի կողմից, մեր գրականագետներին ու պատմաբաններին լավագույն կողմնորոշում է տալիս սկզբունքային քննադատությամբ բացահայտելու առանձին գիտական գործերի մեջ եղած նման սխալ կոնցեպցիաները 50—60-ական թվականների ռևոլյուցիոն դեմոկրատիզմի և լիբերալների գնահատման հարցում:

50—60-ական թվականների հայ հասարակական մտքի և գրականության պատմության մեջ Նազարյանցին ներկայացնելը և փառաբանելը որպես պրոգրեսիվ շարժման «ղեկավարի» և միաժամանակ պրոգրեսի իսկական կրողներին նրան լրացնող երկրորդական դեմքեր համարելը, որով և լիբերալիզմի դեմ ուղղված ռևոլյուցիոն-դեմոկրատական հոսանքի գոյության ժխտելը — դա

1 Գր. Հարությունյան, հաշվետու զեկուցում Հայաստանի Կ(Բ)Պ 16-րդ համագումարում Հ(Բ)Պ Կենտրոնական Կոմիտեի աշխատանքի մասին, Հայսեփրատ, 1942, էջ 66:

բուրժուա-նացիոնալիստական ռեակցիոն «միասնական հոսանքի» կոնցեպցիայի էական գծերից մեկն է:

Այսպես, լիբերալ պատմաբան-քննադատ Լեոն միշտ ճգնել է անտեսել հրականում գոյություն ունեցող բուրժուական և դեմոկրատական կուլտուրայի միջև եղած պայքարը, անտեսել պրոգրեսիվ-դեմոկրատականի գոյությունը և հարցը պատկերացնել այնպես, որ իբր թե կուլտուրայի բնագավառում պրոգրեսի կրողները եղել են լիբերալները: Նա հենց այդպես է վարվում նազարյանցին և Նալբանդյանին գնահատելու հարցում, երբ գրում է Նալբանդյանի՝ «Հյուսիսափայլ»-ում տպվող «Հիշատակարան»-ների մասին, թե «Սկզբունքները, դավանությունները, իհարկե, միևնույնն էին, խմբագրի և գլխավոր աշխատակցի միջև ոչինչ գաղափարական անհամաձայնություն չէր լինում: Այն, ինչ նազարյանցը հայտնում էր իր լուրջ ու ծանրախոհ բարձր ոճով, հաճախ կարինետային ոգով գրված հողվածներում, Նալբանդյանը ժողովրդականացնում էր իր թեթև և վառվռուն գրչով»: «Նալբանդյանը լրացնում էր նազարյանցին» և որ նազարյանցն էր կոչված «հեղաշրջելու հայոց գրականության կերպարանը»:

Բուրժուա-նացիոնալիստական «միասնական հոսանքի» այս կոնցեպցիայի ամենաբնորոշ հեղինակներից ու կրողներից է Աշոտ Հովհաննիսյանը, որը Նալբանդյանի «Անտիպ երկերի» կոմենտարներում սպեցիֆիկյան դիրքերից բացահայտորեն ժխտում է ունեցություն-դեմոկրատական հոսանքի գոյությունը հայ իրականության մեջ: Նա գտնում է, որ Նալբանդյանը եղել է նազարյանցի հետ «ընդհանուր պլատֆորմ» ունեցող լիբերալ-լուսավորական, բայց ոչ երբեք ունեցություն դեմոկրատ: Նրա «տեսակետով» Նալբանդյանը իր «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատությունը գրել է «կացնի վճռահատությունը կանխելու մտայնությամբ», որ հենց այնտեղ նա «արտահայտվել է վճռականապես քաղաքական կացնահարման դեմ», որ նա «Երկրագործության» մեջ դեմ է եղել Չերնիշևսկուն, դեմ է եղել հողային հարցի լուծման ունեցություն ճանապարհին և պաշտպանել է լիբերալ ազնվականների ռեֆորմների ուղին և որ նա «Երկրագործությունը» գրել է Պոլսի բուրժուական «Բարեգործականի» միջավայրում հասունացած խնդիրներին արձագանքելու համար:

Լենինը բունդական «ազգային կուլտուրայի», բուրժուա-նացիոնալիստական «միասնական հոսանքի» տեսությունը ջախջախիչ հարված հասցնելով՝ շարադրել է յուրաքանչյուր ազգային կուլտուրայում երկու կուլտուրաների գոյության իր հանճարեղ տեսությունը:

Յուրաքանչյուր ազգային կուլտուրայում կան, թեկուզ չարագացած, դեմոկրատական և սոցիալիստական կուլտուրայի տարրեր, որովհետև յուրաքանչյուր ազգի մեջ կա աշխատավոր և շահագործվող մասսա, որի կյանքի պայմաններն անխուսափելիորեն ծնունդ են տալիս դեմոկրատական և սոցիալիստական իդեոլոգիայի: Բայց յուրաքանչյուր ազգի մեջ կա նաև բուրժուական (իսկ մեծ մասամբ նաև սեփականության ու կղերական) կուլտուրա և այն էլ ոչ թե «տարրերի» միայն, այլ տիրապետող կուլտուրայի ձևով: Ուստի «ազգային կուլտուրան» ընդհանրապես կալվածատերերի, տերտերների, բուրժուազիայի կուլտուրա է: Այս հիմնական ճշմարտությունը, որ մարքսիստի համար այբբենական է, բունդականը թողել է ստվերում և «բարբառել է» խոսքերի իր շարանով, այսինքն՝ դասակարգային անդունդը բացահայտելու և պարզաբանելու փոխարեն՝ իրականում ընթերցողին տվել է այդ անդունդի մթաղնումը:

Իրականում բունդականը հանդես է եկել իբրև մի բուրժուա, որի ամբողջ շահը պահանջում է հավատ տարածել ապադասակարգային ազգային կուլտուրայի նկատմամբ:

Առաջադրելով «դեմոկրատիզմի և համաշխարհային բանվորական շարժման ինտերնացիոնալ կուլտուրայի» լոզունգը՝ մենք յուրաքանչյուր ազգային կուլտուրայից վերցնում ենք միայն նրա դեմոկրատական և նրա սոցիալիստական տարրերը, վերցնում ենք դրանք միայն և անպայման իբրև հակակշիռ յուրաքանչյուր ազգի բուրժուական կուլտուրայի, բուրժուական նացիոնալիզմի¹:

Ինչպես պարզ երևում է այս հանրահայտնի քաղվածքից, լենինը շարունակ իբրև երկու տարբեր կուլտուրաներ, իբրև հետադիմական և պրոգրեսիվ կուլտուրաներ, հակադրում է ոչ թե բուրժուականը՝ կղերականին, այլ բուրժուականին և կղերականին հակադրում է դեմոկրատականը և սոցիալիստականը: Հասկանալի է, որ այն քննադատները, փիլիսոփաներն ու պատմաբանները, որոնք այս կամ այն չափով մոտեցնում են ռևոլյուցիոն-դեմոկրատ նալբանդանին և լիբերալ նազարյանցին կամ անտեսում են նրանց միջև եղած հակադրությունն ու պայքարը, գերադնահատում են նազարյանցի և նմանների՝ կղերա-ֆեոդալական հոսանքի հետ ունեցած որոշ բախումների պատմա-հասարակական նշանակությունը, դրանով իսկ տուրք են տալիս բուրժուական «միասնական հոսանքի» կոնցեպցիաներին:

Որ իրոք 50—60-ական թվականներին հայ հասարակական կյանքում իրար դեմ պայքարող հիմնական հոսանքները եղել են ոչ թե լիբերալ ու կղերա-ֆեոդալական հոսանքները, այլ լիբերալ (կղերա-ֆեոդալականի հետ միասին) և ռևոլյուցիոն դեմոկրատական հոսանքները, և որ հասարակական պատմական այն ժամանակվա իրադրությունը, այլ կերպ էլ իրերը չէր կարող պայմանավորել, այս հրաշալի կերպով մեզ սովորեցնում է լենինը, նաև հենց 50—60-ական թվականների ռուս հասարակական կյանքի իր հանճարեղ բնութագրումներով:

«Ճորտատերերի և լիբերալների տխրահռչակ պայքարը,— գրում է լենինը 1911 թվին,— որն այնքան ուռցրել ու գունազարդել են մեր լիբերալ և լիբերալ նարոդնիկական պատմաբանները, պայքար էր տիրապետող դասակարգերի ներսում, ավելի շատ՝ կալվածատերերի ներսում, պայքար, որը մղվում էր բացառապես զիջումների շափի և ձևի համար: Լիբերալները նույնպես, ինչպես և ճորտատերերը, կանգնած էին սեփականության և կալվածատերերի իշխանության ճանաչման հողի վրա, զայրույթով դատապարտելով ամեն մի ռևոլյուցիոն միտք՝ այդ սեփականության ոչնչացման մասին, այդ իշխանության լիակատար տապալման մասին»²: Այնուհետև լենինը շարունակում է. «1861 թվականի փետրվարի 19-ը նշանավորում է ճորտատիրական էպոխայից վերաճող նոր, բուրժուական Ռուսաստանի սկիզբը: 1860-ական թվականների լիբերալները և Չերնիշևսկին ներկայացուցիչներն են երկու պատմական տենդենցների, երկու պատմական ուժերի, որոնք այն ժամանակից ի վեր ընդհուպ մինչև մեր ժամանակը, որոշում են նոր Ռուսաստանի համար մղվող պայքարի ելքը»: Լինելով ռևոլյուցիոն դեմոկրատ, Չերնիշևսկին 61 թվականի «Գյուղացիական ռեֆորմը» «անվանեց զարշնչիություն, որովհետև նա պարզորեն

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 20, էջ 9—10:

² Վ. Ի. Լենին, հատ. 17, էջ 132:

տեսնում էր նրա ճորտատիրական բնույթը, պարզ տեսնում էր, որ պ. ա. լիբերալ ազատարարները գյուղացիներին պլոկում էին մինչև վերջին թելը: 60-ական թվականների լիբերալներին Չերնիշևսկին անվանեց «շաղակաւտներ, սնապարծներ և տխմարներ», որովհետև նա պարզ տեսնում էր նրանց վախը հանդեպ ռևոլյուցիայի, նրանց թուլակամությունն ու ստորաբարձությունը հանդեպ իշխանություն ունեցողների»¹:

Այս բոլորը, անկասկած, ամբողջովին վերաբերում են և ռուս հասարակական կյանքի հետ սերտորեն կապված հայ իրականությանը: Մեր իրականության մեջ էլ նույն թվականներին կղերա-ֆեոդալական խավերի և լիբերալների միջև եղած պայքարը, որն այնքան ուռցրել և փառաբանել են մեր լիբերալ պատմաբանները, պայքար էր տիրապետող դասակարգերի ներսում: Իմ հայ լիբերալներն էլ կատաղի կերպով դեմ էին ռևոլյուցիոն դեմոկրատիային, ամեն մի ռևոլյուցիոն մտքի և մեր իրականության մեջ էլ լիբերալներն ու դեմոկրատներն էին ներկայացուցիչները երկու պատմական տենդենցների, երկու պատմական ուժերի, որոնց միջև եղած պայքարը բնորոշում էր տվյալ ժամանակաշրջանի հասարակական կյանքի ընթացքը:

Այս միանգամայն ապացուցում է հայ ռևոլյուցիոն դեմոկրատիայի պարագլուխ Նալբանդյանի, միաժամանակ կղերականության և լիբերալների ու նրանց գաղափարախոսության դեմ մղած պայքարը:

Կարելի է բավական թվով օրինակներ բերել, երբ մեր գրականագետների և փիլիսոփաների՝ Նալբանդյանի մասին գրած, նույնիսկ որոշ կողմերով հաջող հոդվածներում, բառ անգամ չի ասվում նրա՝ լիբերալների դեմ մղած պայքարի մասին. ինչպես օրինակ, 1949 թվականի «Սովետական գրականություն և արվեստ» ամսագրում տպագրված Հ. Մկրտչյանի «Մեծ ռևոլյուցիոններ դեմոկրատ Միքայել Նալբանդյանը» և Հ. Ասլանյանի «Հայ մարտնչող մատերիալիստը» հոդվածներում: Մեր պատմաբանների մոտ պատահում են դեպքեր, երբ մանրամասն կանգ են առնում 50—60-ական թվականների հասարակական կյանքի հանգամանքների վրա, բայց խուսափում են տվյալ ժամանակաշրջանում առաջացած հասարակական մտքի տարբեր հոսանքների ու նրանց միջև ծավալված պայքարի մասին խոսելուց, իսկ եթե խոսում էլ են, թույլ են տալիս բավական կուպիտ սխալներ:

Նալբանդյանի ռևոլյուցիոն դեմոկրատական պայքարը այնպես ներկայացնել, որպես թե այդ իր ամբողջ ուժով և սրությամբ ուղղված էր միայն կղերա-ֆեոդալական-պահպանողական հոսանքի դեմ, նշանակում է դրանով արտահայտել Նալբանդյանին լիբերալների հետ մոտեցնելու տենդենց: Այդպիսի կուպիտ սխալ տեղ է գտել, նաև Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի պատրաստած հայ գրականության պատմության դասագրքի առաջին հատորում, խմբադիրների (Մ. Մկրյան, Հ. Մելիքյան և էդ. Բուփչյան) անուշադիր և վստ աշխատանքի հետևանքով: «Հայ գրականությունը 19-րդ դարի 50—60-ական թվականներին» ներածական գլխում (որի հեղինակն է ընկեր ի. Սարգսյանը), բացի շատ թույլ հիշատակությունից Նալբանդյանի և Նազարյանցի լեզվական հայացքների միջև եղած տարբերությունների մասին, ոչ մի խոսք չի ասված, թեկուզ այդ կապակցությամբ լիբերալ և դեմոկրատական հոսանքի միջև եղած պայքարի մասին: Նալբանդյանը թեպետ գնահատված է

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 17, էջ 133—134:

իբրև ռևոլյուցիոն դեմոկրատի, բայց նրա ռևոլյուցիոն դեմոկրատական գործունեության մասին չի խոսվում, նրա և Նազարյանցի սոցիալական, ինչպես և քաղաքական հայացքների, Նալբանդյանի և Պատկանյանի հայացքների և նրանց միջև եղած պայքարի մասին ոչ մի խոսք չի ասվում: «Հյուսիսսփայլ»-ը, — գրված է ներածականում, — հիմնականում ոչ թե Նալբանդյանի, այլ Ստ. Նազարյանցի և նրա համախոհների օրգանն է: «Բուրժուական լուսավորական օրգանն արծարծում էր հասարակական-կուլտուրական կյանքի վերափոխման գաղափարներ, պահանջում էր լեզվի աշխարհականացում, դպրոցական աշխատանքի վերանորոգում, թատրոն, եկեղեցու բարեփոխում (ըստ որում պետք էր ասել ոչ թե եկեղեցու, այլ եկեղեցականության Մ. Մ.), վաճառականության զարգացում և այլն»: Բացատրություն չկա, թե Նազարյանցը հասարակական կյանքի ի՞նչ «վերափոխման» գաղափարներ է արծարծել: Նազարյանցի իբրև ոխերիմ թշնամիներ ներկայացված կղերապահպանողականության մասին ասված է, որ նրանք «միապետական կարգերն ընդունում էին անվերապահորեն և հավասարության նշան էին դնում միապետության շահերի ու ժողովրդի շահերի միջև», իսկ միթե՞ սրանով պահպանողականները հակադրվում էին լիբերալներին, միթե՞ լիբերալներ Նազարյանցը կամ Պատկանյանը նույնպես անվերապահորեն միապետության կողմնակիցներ չէին: Այդ մասին լռում է հեղինակը: «Հարկավոր էր մերկացնել լուսավորության թշնամիներին, խորտակել նրա ուժը», ասված է ներածականում և միաժամանակ իբրև այս խնդրի իրագործող, ներկայացված է Նազարյանցը: Այս բոլորը միանգամայն որոշակիորեն ցույց են տալիս, որ ընկեր Ծարգսյանը ամեն կերպ աշխատել է անտեսել լիբերալների և ռևոլյուցիոն-դեմոկրատների միջև եղած տարբերությունները, մոտեցնել և համարյա հավասարեցնել նրանց իրար, ժամանակի դասակարգային հիմնական կոնֆլիկտը լիբերալների ու պահպանողականների միջև տեսնելու տենդենցով:

Դասագրքի այս սխալը եզակի փաստ չէ իհարկե, դասագրքի հրատարակվելուց առաջ և հետո էլ լույս տեսած որոշ հոդվածներում և աշխատություններում մենք հանդիպում ենք «միասնական հոսանքի» նման ռեցիդիվների: Այս տեսակետից չի կարելի չհիշատակել պրոֆեսոր Ռուսեթ Հովհաննիսյանի «Ռուս գրականությունը հայ հասարակական մտքի գնահատմամբ» աշխատությունը: Շատ առումներով արժեքավոր և շնորհակալ այս աշխատության մեջ հեղինակը խորր ուսումնասիրած շլիներով հայ մամուլի պատմությունը, հաճախ տուրք է տալիս բուրժուական բանասիրությունից եկող շաբլոնին՝ տվյալ շրջանի պրոգրեսիվ և ռեակցիոն հոսանքները որոշելու հարցում: Վերցնելով գրքի միայն 60-ական թվականներին վերաբերող բաժինը, հանդիպում ենք այսպիսի մի քանի բնորոշումների: «Հայ թե՛ պրոգրեսիվ և թե՛ ռեակցիոն մտքի, դեպի ռուս դրակուսությունը ցուցաբերած վերաբերմունքը դրսևորում է զանազան հոսանքների հասարակական քաղաքական ձգտումները», ճիշտ կերպով նկատում է ընկ. Ռուսեթ Հովհաննիսյանը: Սակայն ո՞րն է, ըստ նրա, այդ ժամանակի պրոգրեսիվ կողմը: ««Հյուսիսսփայլ»-ը, Ստեփանոս Նազարյանցը և Միքայել Նալբանդյանը թարգմանում, տպագրում, գնահատում էին Պուշկինի, Կարամզինի ստեղծագործությունները», գրում է նա: Չնայած Նազարյանցը «Հյուսիսսփայլ»-ում ռուս գրականությանը շատ քիչ տեղ էր տալիս, ընկեր Հովհաննիսյանը գոհ է և Նալբանդյանին ու Նազարյանցին միասին ներկայացնում է իբրև պրոգրեսիվ հոսանքի ներկայացուցիչներ, տար-

բերություն չգտնելով նրանց միջև «Հյուսիսսփայլ»-ը, — շարունակում է ընկեր Հովհաննիսյանը. — շատ բան է սովորել ոուս ուկրաինացիոն-դեմոկրատական հանդեսներից, թերթերից, առանձնապես Բելինսկու «Օտեչեստվեննիյե զապիսկի» ամսագրից, Գերցենի և Օգարյովի լոնդոնյան ազատ մամուլից («Կոլոկոլ», «Պոլյարնայա զվեզդա»), Չերնիշևսկու և Նեկրասովի «Սովրեմեննիկ»-ից, նրանց գրական, քննադատական, հրապարակախոսական մտքից, գործունեությունից ու տակտիկայից: Ստեփանոս Նազարյանցն ևս, ինչպես Նեկրասովը, տաղանդ ուներ տաղանդներ հայտնաբերելու մեջ: Նազարյանցն ու Նալբանդյանը «Հյուսիսսփայլ»-ին տվեցին (ինչպիսին և «Սովրեմեննիկ»-ն էր) շատ լուրջ քաղաքական, գրական, գիտական բնույթ, ձգտելով ժամանակակից ակտուալ հարցերին վերաբերող նյութեր տպագրել¹: Եթե ընկեր Ռուսեթ Հովհաննիսյանի այս արտակարգ ոգևորությունը ենթարկվենք, պիտի ասենք, որ «Հյուսիսսփայլ»-ը կրում էր իր մեջ ոուս ուկրաինացիոն դեմոկրատական մամուլի ամբողջ հարստությունն ու փայլը, և Նազարյանցն էլ ճիշտ այնպիսի խմբագիր էր, ինչպես ոուսական այդ թերթերի խմբագիրներն էին: Նախ «Հյուսիսսփայլ»-ում տպագրված Նալբանդյանի գործերը նույնիսկ դեռ մեզ լիովին իրավունք չեն տալիս նման պնդման համար (ուկրաինացիոն դեմոկրատների հրապարակախոսական գործունեություն, տակտիկա և այլն), էլ ուր մնաց Նազարյանցին, և երբ ընկեր Հովհաննիսյանը անվերջ Նազարյանցին և Նալբանդյանին հանդես է բերում միասին, իրեն առաջավոր գործիչների, կատարում է խոշոր սխալ, անտեսելով ուկրաինացիոն դեմոկրատների և լիբերալների միջև եղած սահմանները:

Այս տեսակետից ավելի հոռի փաստեր հանդիպում ենք Նալբանդյանի երկերի ակադեմիական հրատարակության (խմբագիրներ՝ Հ. Մելիքյան, Հ. Մկրտչյան և Խ. Սարգսյան) կոմենտարներում և ծանոթագրություններում: Այսպես՝ առաջին հատորի անձնանունների բառարանում Նազարյանցի մասին գրված է. «Հուլիսի 1-ին գիտնական, հրապարակախոս, «Հյուսիսսփայլ» ամսագրի խմբագիր... Նալբանդյանի անձնական բարեկամներից մեկը: Մեծ է եղել Նազարյանցի դերը Նալբանդյանի հոգևոր կյանքի զարգացման գործում: Մոսկվայում նրան հանդիպած առաջին հայը, որ իր կրթությամբ, դիրքով և աշխարհայացքով աչքի էր ընկնում նույնիսկ ոուսական միջավայրում՝ Նազարյանցն էր: Նրանց մերձեցման այս առաջին շրջանում և հատկապես հայկական իրականությունում վերաբերող հարցերում և, ահա, որ անպայման նշանակալից է եղել Նազարյանցի ազդեցությունը: Հյուսիսսփայլյան շրջանի համատեղ գործունեության հայտնի երկամյակը (1858—1859) երևան հանեց նրանց հայացքների ինչպես նույնությունը հասարակական կյանքի ու կուլտուրայի շատ հարցերում, նույնպես և տարբերությունը...»²:

Նախ, ի՞նչ անձնական բարեկամության մասին է խոսքը, որով այնքան հրապուրվում են հաճախ մեր բանասերները: Միթե՞ «Հյուսիսսփայլ»-ից հեռանալու առթիվ Նալբանդյանի՝ Սալթիկյանին դրած նամակից պարզ չի երևում, թե ինչպիսի այսպես ասած «բարեկամություն» է եղել նրա և Նազարյանցի միջև: Նալբանդյանը այնքան զայրացած էր իր նկատմամբ բացահայտ հակադրությունից բխող՝ Նազարյանցի ոչ մարդկային, տմարդի վերաբերմունքի առթիվ, որ գրում էր. «...Սիրտս արյունի ծով է... Քեզ

¹ Ռ. Հովհաննիսյան, Ռուս գրականությունը հայ հասարակական մտքի զննահատմամբ, էջ 68:

² Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. I, էջ 547:

գրածս ևս բոլորը չէ, ավելի խայտառակ բաներ կան, որ միմիայն բերանով կարելի է ասել, ըստ որում ամոթ է թղթի վերա գրել: 1860 թվին Հյուսիսսփայլին պիտի ստորագրվիմ և Պետերբուրգից պիտի ուղարկեմ պարոն Նազարյանցին 9—50 կոպեկ»:

Ինչպես երևում է, Նազարյանցի և Նալբանդյանի հենց անձնական փոխհարաբերությունների մեջ այնպիսի մոմենտներ են եղել, որ դրանց մասին Նալբանդյանը նույնիսկ ամոթ է համարել գրել, իսկ ինչպիսի դառն հեզնանք կա չեպի Նազարյանցի, երբ Նալբանդյանն ասում է, թե ինքը «Հյուսիսսփայլ»-ին պիտի բաժանորդագրվի և դրամը ուղարկի Նազարյանցին: Մի՞թե պարզ չի երևում այն հանգամանքը, որ Նալբանդյանը բացահայտ կերպով չի ընդհարվում Նազարյանցի հետ այն պատճառով, որպեսզի հնարավորություն ունենային ինքը և իր համախոհները «Հյուսիսսփայլ»-ի էջերը օգտագործել իրենց դադափարների արծարծման համար:

Կատարված մեջբերման մեջ առավել կոպիտ սխալն ու զայրացուցիչն այն է, որ Նալբանդյանը փաստորեն ներկայացված է որպես իբր «հռչակավոր» պիտնական ու հրապարակախոս որակված՝ Նազարյանցի աշակերտ, որ նույնիսկ իր «ուսուցչից» դասեր է առել «հայկական իրականությունը վերաբերող հարցերում». այս առնվազն ծիծաղելի է. և այնուհետև ասվում է, թե նրանց հայացքների մեջ տարբերությունների հետ միասին եղել է «նույնություն»: Սակայն այս բնութագրի հեղինակը չի բարեհաճում այնուամենայնիվ, թեկուզ շատ համառոտ նշել, թե ո՞րն է այդ «նույնությունը»:

Պետք է ասել, որ Նալբանդյանի և լիբերալների հայացքների միջև նույնություն, և Նալբանդյանին լիբերալների ազդեցությամբ ձևավորված լինելու նման հակադրական կոպիտ սխալներ հանդիպում են նաև որոշ այնպիսի գործերում, ուր խոսվում է արևմտահայ հասարակական մտքի հոսանքների մասին: Այսպես, ընկեր Անուշավան Մակարյանի «Միքայել Նալբանդյանը և արևմտահայ դեմոկրատիան» գրքում հանդիպում ենք մի այսպիսի արտառոց կարծիքի. հեղինակը գրում է. «Ոսկանը... հայ դեմոկրատական հրապարակախոսության առաջին ամենախոշոր ներկայացուցիչն է... դեմոկրատական հրապարակախոսության ամենաբարձր գագաթը Նալբանդյանն է, բայց ժամանակագրական կարգով առաջնությունը պատկանում է Ոսկանին: Նա նախապատրաստեց Նալբանդյանի և Սվաճյանի հրապարակախոսությունը և այսպիսով հանդիսացավ հայ դեմոկրատական հրապարակախոսության ամենախոշոր ուսուցիչը» (էջ 48—49): Ահա՛, թե բանը որտեղ կարող է հասնել. կանտյան իդեալիստ լիբերալ Ոսկանը համարվում է հայ դեմոկրատական հրապարակախոսության «ամենախոշոր» ուսուցիչը, և Նալբանդյանի ու Սվաճյանի հրապարակախոսության նախապատրաստողը:

Մեր գրականագետների մոտ նկատվող սխալներից մեկն էլ այն է, որ առհասարակ գրական երևույթները և գրողներին գնահատելիս, հաճախ կառչում են և հիմք են ընդունում միայն այն, թե որ գրողը կամ հրապարակախոսը մի ուրիշ գրողի կամ հրապարակախոսի մասին ինչ է ասել լավ կամ վատ, կամ ինքն իր մասին ինչ կարծիքներ է հայտնել, կամ իր աշխատությունները որտեղ է տպագրվել և այլն, ու շատ անգամ ըստ այդմ էլ խմբում են նրանց տարբեր հասարակական հոսանքների անվան տակ: Հասկանալի է, որ ոչ բոլոր

¹ Մ. Նալբանդյան, Ծրկերի լիակատար ժողովածու, հատ. IV, էջ 65:

դեպքերում նման փաստերը կարող են հիմք հանդիսանալ: Հակառակը, դրա հետևանքով հաճախ թույլ են տրվում սխալներ, և շատ բան մեր գրականության պատմության մեջ խառնվում է իրար ու ճիշտ լուսաբանություն չի ստանում: Այսպես, օրինակ, եթե ասենք, Շահազիզը Յուրի Վեսելովսկուն գրած նամակում իրեն համարում է «Հյուսիսափայլ»-ի այն մարդկանց շարքում, որոնք հետևում էին «Սովրեմեննիկ» ամսագրի ուղղությունը, կամ եթե նրա հերոս Լևոնը իր հետ վերցնում է «սիրած Կոմսի» երգերը, ապա շտապում են եզրակացնել, թե Շահազիզը ռևոլյուցիոն դեմոկրատ է և դնում են Նալբանդյանի կողքին: Եթե, ասենք, Նալբանդյանը իր թարգմանած «Թափառական հրեա»-ն նվիրել է Նազարյանցին, և եթե Նազարյանցն էլ Նալբանդյանի մասին երբեմն դրական է արտահայտվել, ապա եզրակացնում են, թե առնվազն եղել է մի շրջան, երբ Նալբանդյանը հետևել է Նազարյանցի հրապարակախոսությանը: Խնչպես նշեցինք, աշխարհայացքային կապեր գտնելու և սահմանելու համար ոչ բոլոր դեպքերում կարող են հիմք հանդիսանալ նամակներում և այլուր հեղինակների՝ իրար տված որակումները: Ընդհանրապես պետք է նկատել, որ շատ դեպքերում հեղինակները և հրապարակախոսները իրար մեկնաբանում և հասկանում են յուրովի և արժեքավորում են իրար, ասենք այնպիսի բաների համար, որ ըստ էության իբրև այդպիսիք երբեք գոյություն չունեն: Իբրև նման դեպքի մի ցատուկն օրինակ կբերենք հենց Նալբանդյանի «Թափառական հրեա»-ի թարգմանության մասին Նազարյանցի գրախոսականը, որտեղ Նալբանդյանին մեծարելով «առաքինի հոգիացած մարգերից մեկը» արտահայտությամբ, բերում է նրա այն միտքը, թե այժմյան դրության մեջ հայերին «Պիտո է ընդհանուր և հասարակ կրթություն, որպես պատրաստողական հնար դեպի առավել բարձր ու հիմնավոր առարկայի կամ ուսման ճյուղի» և գրում է. «Եթե չենք սխալվում, հեղինակի միտքն այն է, որ զոր օրինակ մի քաջ լեզվագետ, ֆիզիկոս, քիմիկոս, որ առանձնապես պատրաստում էին այդ գիտություններին, կարող են միայն երևել ազգի մեջ այն ժամանակ, երբ ազգը ունենար դպրոցներ, այդպիսի մարդիկ զործ դնելու յուր օգտի համար օրինավոր պատվելի պահպանությամբ, բայց որովհետև ազգը ոչ հաց ունի և ոչ պատիվ այդպիսի ուսումնականների համար, ուրեմն դոքա և հառաջանալ կարող չէին հայերի մեջ»: Այստեղ բոլորովին այլ բան, այլ տեսակետ վերագրելով Նալբանդյանին, Նազարյանցը շարունակում է, ասելով, որ դա ճշմարիտ է, «բայց կա և մի այլ տեսություն՝ հաջր իբրև Ռուսաստանի հպատակ, ուրեմն քաղաքականապես որպես ռուս, առանց միտ դնելու նորա մասնավոր հարակցությանը դեպի յուր ազգը, կարող է մշակել յուր աստվածատուր քանքարը որևիցե գիտության մեջ, նշանավոր կացուցանելով յուր անձը, և այսպես պատրաստել յուր համար պատվավոր կեցություն, որպես ռուսական պաշտոնավոր՝ տերության ուսումնականների կարգումը»: Այս բոլորից պարզ երևում է, որ տվյալ դեպքում, երբ Նազարյանցը ամենից լավ է արտահայտվել Նալբանդյանի մասին, նրանց արժարժած մտքերի մեջ ըստ էության ոչ մի նմանություն չկա:

Քննադատները երբեմն «հուլմունքով» նշում են, թե մինչև այժմ պարզված չէ, թե ինչ հարցերում Նալբանդյանը սկզբունքային տարբերություններ է ունեցել Նազարյանցից «Հյուսիսափայլ»-ի հիմնադրման նախօրեին, կամ նրա գոյության առաջին երկու տարիներին, կարծես թե «նմանությունները» արդեն պարզված և ապացուցված լինեին: Ի՞նչն պնդում ենք, որ որևէ սկզբունքային-հասարակական բնույթի հարցում (և թե մի կողմ թողնենք այն, որ երկուսն էլ գրա-

բարը մեռած լեզու էին համարում և գրում էին աշխարհաբար), նրանց միջև ընդհանրություն չկա և որ նախնայանք երբեք չի եղել նազարյանցի հետևորդը՝ Այս բանը ապացուցելու համար կարելի է բազմաթիվ օրինակներ բերել թեկուզ «Հյուսիսսփայլ»-ում տպագրված նախնայանի «Հիշատակարան»-նև ընդ»:

Այս կապակցությամբ չենք կարող չհիշել այն ծանոթ փաստը, որ անկասկած նազարյանցը նախնայանի գործերը տպագրել է որոշ փոփոխություններով: Հենց «Հիշատակարան»-ում է, որ նախնայանը գրել է, թե «իմ հորեղբայրն իմ գլխին ցենզորի նման մի բան է, շատ խիստ բարոյականության տեր մարդ է, ամենայն օր նայում է հիշատակարանիս, որ մի անպատշաճ բան չգրեմ» կամ «Մի քանի օր սորանից առաջ, — երգիծաբար պատմում է նախնայանը, — գալիս է իմ մոտ ծանոթներիցս մինը... պատմում է ինձ... թե պ. Բեգզադեն, անշափ ուրախացել է լսելով, իբր թե հորեղբայրս պատվիրել է ինձ ներս չբերել հիշատակարանիս մեջ ա. Բեգզադեն, կամ նրա գործերը: Պ. Բեգզադեն իմանալով որ ես տկար մարդերի կողմից բամբասանքի տակ եմ ձգել իմ անձը, եզրակացուցել է թե ահա, այս է որ կա, կոմս էմանուիլի հորեղբայրը կը կապե նորա բերանը: — Հրամեքես, միայն քո ցանկությունն էր պակաս այդ բանի համար»¹: Այս հանգամանքը գալիս է ասելու, որ նազարյանցը կարող էր և որոշ հավելումներ արած լինել նախնայանի գործերում: Բանասերները պետք է իրենց ուշադրությունը դարձնեն նախնայանի՝ հյուսիսսփայլյան գործերում մերթնդմերթ հանդիպող կրոնական բնույթի դատողությունների վրա, որպես, հավանաբար, նազարյանական հավելումների վրա:

Իսկապես, ի՞նչ է ներկայացնում նազարյանցի հրապարակախոսությունը, որն է նրա և՛ական գիծը: Այդ, պետք է ասել, այնքան էլ դժվար չէ նկատել, քան ինչ որ նազարյանցի ինքնուրույն հոգվածները, որոնք մեծ մասամբ գրվում էին ամսագրում տարին փակելու կամ նոր տարի սկսելու առթիվներով, զարմանալի մոտոտոն, միապաղաղ բովանդակություն ունեն և «Հյուսիսսփայլ»-ի ամբողջ ընթացքում նա հետևողականորեն կրկնել է անընդհատ համարյա նույն մտքերը: Նազարյանցը սիրում էր իր ամսագրի էջերից շարունակ հայտարարել, որ «Հյուսիսսփայլ»-ը աշխատում էր յուր ազգի դաստիարակության վրա, որ այն «ամեն ճիգ ու ջանք գործ դնելով աշխատում է լուսավոր գաղափարներ տալ ազգին», «հալածական անել շար ասիական խավարը», և իրեն թույլ տալով լիբերալություն անել՝ շարունակ դիմում է հայությանը «մեր սիրելի ժողովուրդ», «պատվելի հայոց ազգ», «մեր սիրելի հայրենակիցներ», «իմ սիրուն հայ ազգի պարոններ և սիրելի եղբայրակիցներ» և այլ արտահայտություններով: Որո՞նք էին այն «լուսավոր գաղափարները», որոնց ուզում էր նազարյանցը հաղորդակից դարձնել ազգին, որոնք իրենց մեջ ընդգրկում են նազարյանցի քաղաքական-սոցիալական պատկերացումների բովանդակությունը, որոնք կապված են նրա ռևոլյուցիոն քաղաքական-սոցիալական հայացքների հետ:

Այսպես՝ հենց 1858 թվականի «Հյուսիսսփայլ»-ի վերջարան «Շնորհավոր նոր տարի» հոդվածում նա գրում է.

«Հայք քրիստոնյայք են հավատով. այդ շատ փոքր բան է, մի ազգային անուն, մի ազգային պատիվ ունենալու աշխարհի երեսին, ազգերի մեջ»:

Բայց շարունակում է նա.

¹ Մ. ն ա լ բ ա ն դ յ ա ն, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 1, էջ 387:

«Հայոց ազգը» ունի աշխարհի հրապարակի վրա կատարելու մի օր մի մեծ և գեղեցիկ խորհուրդ¹։ Իսկ ո՞րն է այդ «խորհուրդը»։

...«Հայոց ազգը վերաբերությամբ դեպի Ասիա, ունի մի մեծ և հոյակապ կոչումն. նորան կարելի է համարել այն խմորը, որ դրած է Ասիայի եռացող նյութերի մեջ, որ հոգեղեն կյանքի համարյա թե մեռած ծիւերը մյուս անգամ զարթեցնեն և կենսագործեն»։

...«Հայերի կոչումը տիեզերական մարդկության մեջ, որ է սեփականել յուրյան եվրոպական կրթությունը և լուսավորությունը, և տանել ու տարածել նրան ասիական մարդկության մեջ...»։

Այստեղ երևան է գալիս Նազարյանցի բուրժուական նացիոնալիզմը, որը իր ռասիստական էությամբ հետագայում զարգացրին Գրիգոր Արծրունին և Բաֆֆին։ Նազարյանցը շարունակ խոսում է այն մասին, որ «եթե հայոց ազգը միաբան հողատարությամբ և ամենաջան աշխատակցությամբ չբարվոքեն» իմացական կրթության գործը, ապա «շատակեր Կոռնոսը կուտեն և կմաշեն մեզ, իբրև անպիտանացած որդիք ժամանակի», իսկ Արծրունին զարգացնելով նրան ու թերևս բաց անելով փակագիծը, գրում էր, որ հայերը մի նոր միսիա ունեն մարդկության պատմության մեջ, որոնք պիտի ապացուցեն, որ «ես ապստամբում եմ, ուրեմն ես գոյություն ունեմ» սկզբունքը սխալ է և պիտի ցույց տան, որ հնարավոր է խաղաղ ճանապարհով, եվրոպական քաղաքակրթության միջոցով նվաճել մի բռնակալ ժողովրդի (խոսքը թյուրքերի և քրդերի մասին է)։ «մարդկության ընդհանուր երջանկության համար,— գրում է Արծրունին,— անկուտուրական ազգերը պետք է կուլ գնան քաղաքակրթական ազգերի մեջ, պետք է խմբվեն զորեղ խմբերի հետ, պետք է լուծվեն վերջինների մեջ։ Եվ զորեղ բառով չպետք է հասկանալ բազմաթիվ բառը։ Փոքրաթիվ ազգությունը եթե նա քաղաքակրթության բոլոր հատկություններ ունի, կարող է կլանել ավելի բազմաթիվ ազգությունը»¹։ Ասիական ժողովուրդներին «կլանելու» ռեակցիոն նացիոնալիստական այս զառանցանքի ակունքը, Նազարյանցի հրապարակախոսությունն է։ Այս և շատ այլ հարցերի կապակցությամբ՝ միանգամայն ընդհանրություն կա նաև լիբերալ Նազարյանցի և լիբերալ Պատկանյանի միջև, քանի որ վերջինս նույնպես սարսափում է ժողովրդի ռեոլյուցիոն ազատագրական շարժումից, որի հետևանքով ընկնում է, կամ «թե իմ ալեոր հերքս սենային» բանաստեղծության տիպի ավանտյուրիստական ռոմանտիզմի գիրկը, կամ ցնորում է դարձյալ հայերի ինչ որ պատմական միսիայի ու ցեղային առանձնահատկությունների մասին։

Նազարյանական «ազգի դաստիարակության», «լուսավոր գաղափարների» էության ճիշտ պատկերը կազմելու համար մի հանգամանք ևս պետք է նկատի ունենալ։ Ծիշտ է, նա երբեմն աչքի առաջ ունենալով հոգևորականության կուտուրական սոսկալի հետամնացությունը, գտնում էր, որ «ինքը ժողովուրդը պարտական է վեր կենալ և գործ դնել յուր ղերա մի բարոյական դավազանի զորություն», բայց «ազգի» մեջ «լուսավորություն» տարածելու այս միջոցը նրա սկզբունքը չէր։ Նա գտնում էր, որ Ասիայի մեջ «լուսավորություն» տարածելու համար «ստեղծված» հայությունը, որ ցրված է ահագին տարածության վրա մինչև Յավա կղզին, ունի մի միավորող կենտրոն՝ էջմիածինը, ուստի

¹ Գր. Արծրունի, Թյուրքաց հայերի տնտեսական դրությունը, Թիֆլիս, 1894, էջ 25։

պնդում էր, որ թագավորության բացակայության դեպքում «հոգևոր գլուխը պարտական է գործ դնել մի բարոյական գավազան, կյանք և կենդանություն առաջացնելու աղբի մեջ»։ «Մտածող հայերի հույսերը» հողվածում, որ նվիրված է նոր կաթողիկոս օծվելուն, — գրում է. «Ազգերի բարեկամների կարծիքը այսպես է, որ եկեղեցին պիտո է լինի իմացական և բարոյական կրթության պարագլուխ առաջնորդը»։ Իսկ ինչ ոգով պետք է ժողովրդի «իմացական» և բարոյական կրթության գործը առաջ տաներ եկեղեցին, հասկանալի է, որ կրոնական։ «Երկուքը, եկեղեցին և գիտությունը ներգործում են տերության մեջ, որի խորհուրդն է նույնպես այս երկուքի ձեռքով իրագործել մարդկային ազնվավագործության գաղափարը»¹։ Ըստ Նաղարյանցի, կրոնը «դա ինքն ըստ ինքյան է մի բացարձակ վախճանական նպատակ և բոլոր մյուս մարդկային խորհուրդները և ձգտողությունքը դիմում են և ամփոփվում են կրոնի մեջ իբրև յուրյանց ամենավերին կատարի մեջ»²։

Ահա՛, թե որն է Նաղարյանցի «կուլտուրական պրոպագանդայի» նպատակի ու բովանդակության հիմնական գծերը։ Այս բոլորը հասկանալի են դարձնում, թե ինչու նա այնքան արտակարգ քիչ տեղ է տալիս առաջավոր գաղափարներով այնքան հարուստ ռուս գրականությանը իր ամսագրում, ինչու, ասենք Գոգոլը փարզմանելու փոխարեն, նա թարգմանել է Շատոբրիան և Կիկերոն։ Այս բոլորը ցույց են տալիս նմանապես, որ կղերա-ֆեոդալական հոսանքի և Նաղարյանցի միջև արմատական տարածայնություններ չկային, եկեղեցականությունը միայն մի հարցում էր բանավիճում և վայնասուն բարձրացնում Նաղարյանցի դեմ, դա այն էր, որ Նաղարյանցը երբեմն «եկեղեցու ռեֆորմ» էր պահանջում՝ եկեղեցականության տգիտությունը վերացնելու իմաստով։ Եվ պատահական չէ, որ «Հյուսիսսփայլ»-ի փակվելուց հետո՝ Նաղարյանցը պատրաստվում էր նոր ամսագիր հրատարակել «Ղաթաղ»-ի նախկին խմբագրի Մսերյանի աշխատակցությամբ։

Սրանով չենք ուզում ասել, որ Նաղարյանցի հրապարակախոսության մեջ (խոսքը «Հյուսիսսփայլ»-ի մասին չէ ընդհանրապես) չկան որոշ գրական կողմեր։ Այսպես, օրինակ, նա առաջիններից մեկն էր, որ պաշտպանեց այն ճիշտ սեռականությունը, թե գրաբարը մեռած լեզու է և անհնար է աշխարհաբարը աստիճանաբար մոտեցնել ու հասցնել նրան, և որ հայերենը Ադամի կամ Նոյի լեզուն չէ, այլ հնդկարոպական լեզուների ճյուղերից մեկը։ Ինչքան էլ մենք մի քանի նման մասնակի դրական հանգամանքներ նշենք Նաղարյանցի և նրա նման լիբերալների գործունեության մեջ, միևնույն է, նրանք չեն դադարում լինել այն, նախնադրյանի նման ուղղություն դեմոկրատների հանդեպ, ինչպես բնութագրել է Լենինը ռուս լիբերալներին՝ ուղղություն դեմոկրատների հանդեպ։ «Լիբերականում հենց նրանք էին այդ դարաշրջանի մեծ գործիչները, — գրել է Լենինը ռուս ուղղություն դեմոկրատների մասին, — և, որքան մենք ավելի ենք հեռանում նրանցից, այնքան ավելի է պարզվում մեզ համար նրանց մեծությունը, այնքան ավելի է ակնհայտ դառնում այն ժամանակվա լիբերալ ռեֆորմիստների շնչինությունը, ողորմելիությունը»³։

Ռևոլյուցիոն դեմոկրատների հանդեպ նույնքան և թերևս ավելի շնչին ու ողորմելի էին իրենց հրապարակախոսության բովանդակությամբ կղերա-ֆեո-

¹ Մտ. Ն ա գ ա Ր յ ա ն ց, Երկերի ժողովածու, հատ. 1, էջ 118։

² Նույն տեղում, էջ 317։

³ Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 17, էջ 139։

դալական հոսանքի ներկայացուցիչները, հապա նայեք նրանցից մեկի՝ Պոլսի «Երևակ» թերթի խմբագիր Չամուռճյանի՝ նալբանդյանի դեմ մղած պոլեմիկայի բովանդակությունը. «Դե կենալուն հավատալու չէ կրսե պ. Ս. Շահբեգ, դե կա ըսելը և տպելը հայ մամուլը խայտառակել կանվանե... Սատանայք և անոր հրեշտակները ո՛վ են. շեքուն մեծը իր դեերովը, այնպես չէ՞ որ Շահբեգ, Բայց դուն կրսես թե ոչ սատանա կա և ոչ հրեշտակներ ունի... Թե որ խրատ մտիկ կրնես նե՝ եկուր դեերուն գոյությունը րնդունե... Չէ նե հայտնապես Վոլտերի և անցյալ 18-րդ դարու հոտած ու փտած փիլիսոփայության հետևող խոստովանե դուն քեզի հայտնապես»։ Որքան սքանչելի է ծաղրել դեմոկրատ հայ մեծ սատիրիկ Պարոնյանը նույն Չամուռճյանին, երբ գրել է, թե «իր ծննդյան հետևյալ գիշերը ծնան դեերն, որոնց գոյությունը ապացուցեց իր գոյությամբ»։ Բայց այս և նման դիվահար ռեակցիայի, ժողովրդի արյուն ծծող քուրմերի ուժն այն ժամանակ այն էր, որ բազմաթիվ էին, և ցարակուն ու սուլթանական կառավարություններն էլ ամեն կերպ հովանավորում, օժանդակում էին նրանց, խիստ փոքր թիվ կազմող ռևոլյուցիոն դեմոկրատների դեմ մղած ստոր պայքարում։

Ժամանակի իրադրության մեջ որքան բարձր է նալբանդյանի ռևոլյուցիոն ֆիգուրան, որը ավելի առաջավոր հայացքներ ուներ, քան Վոլտերը և Ֆրանսիական մատերիալիստները, որը ռուս ռևոլյուցիոն դեմոկրատների պանծալի սերնդի՝ Չերնիշևսկու և մյուսների հետևորդն էր ու մարտական զինակիցը, որոնց բարերար ազդեցությամբ նա անցեց որպես օրիդինալ ռևոլյուցիոն մտածող և իր ստեղծագործությամբ անգնահատելի ավանդ մտցրեց հայ առաջավոր կուլտուրայի գանձարանը։ Նալբանդյանը, որով իրավամբ հպարտանում է մեր ժողովուրդը, մեծապես հարստացրեց հայ հասարակական միտքը ռուս սոցիալ-դեմոկրատների նախորդների՝ Բելինսկու, Գերցենի, Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի համաշխարհային նշանակություն ունեցող առաջավոր իդեալներով։

Ընկեր Ստալինը իր «Մարքսիզմը և ազգային հարցը» հանճարեղ աշխատության մեջ նախառևոլյուցիոն շրջանի Ռուսաստանի մասին գրել է. «Ռուսաստանի քաղաքական կյանքի առանցքը ո՛չ թե ազգային հարցն է, այլ ագրարային։ Ուստի ռուսական հարցի և, ուրեմն, նաև ազգերի «ազատագրման» բախտը Ռուսաստանում կապվում է ագրարային հարցի լուծման հետ, այսինքն՝ ճորտատիրական մնացորդների ոչնչացման հետ, այսինքն՝ երկրի դեմոկրատացման հետ։ Դրանով էլ բացատրվում է, որ Ռուսաստանում ազգային հարցը հանդես է գալիս ոչ որպես ինքնուրույն և վճռողական հարց, այլ որպես երկրի ազատագրման ընդհանուր և ավելի կարևոր հարցի մի մասը»¹։

Այս լույսի տակ նայելով նալբանդյանի ստեղծագործությունը և գործունեությունը, միանգամայն շոշափելի ու հասկանալի է դառնում նրա մատուցած մեծագույն ծառայությունը մեր ժողովրդին։ Նա իր ժամանակին հանճարի խորաթափանցությամբ ըմբռնեց պատմական այն ճշմարտությունը, որ հայ ժողովրդի բախտը կապված է ռուսական ռևոլյուցիայի հաղթանակի հետ, որ «ռուսիո ազատությունը, ընդհանուր մարդկության ազատության վերաբերմամբ, մեծ խորհուրդ ունի...» և գլուխ կանգնեց հայ ռևոլյուցիոն-դեմոկրատիային և մեծ Չերնիշևսկու ղեկավարությամբ, արյան, չափ սիրում

¹ Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 2, էջ 371։

ենք ազատությունը նշանաբանով՝ անձնվիրաբար նետվեց ուսական ուսուցիցին պայքարի մեջ ու ցարիզմի հարվածների տակ ընկավ անհավասար կռվում:

Աչքի առաջ բերելով Նալբանդյանի ողջ գեղարվեստական, քննադատական, հրապարակախոսական, գիտական և փիլիսոփայական գործերը, մենք հիանում ենք դրանց բազմաբովանդակության՝ պատմա-հասարակական խորության հանդեպ, գործեր, որոնց մեջ ճանաչվում է ուսուցիցին դեմոկրատի պայծառ և մաքուր հոգին:

Նալբանդյանը պաշտպանում էր այն սկզբունքը, որ «Մարգերի իրավունքը և ազատությունը հավասար է», ուստի նա ամենամեծ ատելությամբ էր լցված դեպի բռնակալական կարգերը, դեպի ազնվականությունը և բուրժուազիան, որոնց դասակարգային արտոնյալ վիճակը նա համարում էր խիստ հակահասարակական և հակամարդկային: Այսօր մեզ չի կարող հիացմունք պատճառել նրա՝ «Գյուղացիական ռեֆորմի» հետևանքով ստեղծված ծանր իրադրության խորը վերլուծությունը: Նա հրաշալի հասկացել էր այդ ռեֆորմի ողջ ճորտատիրական, խղճուկ, ռեակցիոն էությունը, ուստի ժամանակի համար կարևորագույն հարցի՝ տնտեսական հարցի լուծման ուսուցիցին ճանապարհ է նշում՝ հանձնարարելով կացնով վճռել գործը: Նրա հանճարը առանձնապես փայլում է այն դեպքում, երբ նա խոսում է ազգության էության և ազգերի միջև եղած փոխհարաբերության մասին: Նալբանդյանը սուր քննադատության է ենթարկում բուրժուական նացիոնալիզմը և բուրժուական պետությունների (Ամերիկայի, Անգլիայի) վարած զավթողական քաղաքականությունը, իրենց իշխանության տակ ընկած ազգերին ճնշելու և նրանց մարդկային իրավունքները ոտնահարելու քաղաքականությունը: Նալբանդյանը հաջողությամբ մերկացրեց բուրժուական դիպլոմատիայի կեղծիքն ու ռեակցիոն էությունը: «Մինչև հիմա, գրում է Նալբանդյանը, հզոր կառավարությունքը ժողովուրդներ տիրելու համար մի սուտ փաստ ունեին իրենց ձեռքում, որ իբր թե լուսավորություն են տարածում հետ մնացած ազգերի մեջ, իսկ երբ այդ փաստարկման ոչնչությունը երևան եկավ, «եվրոպական հասարակչիւր հանեցին մեջտեղ»: Իսկ Նազարյանցը անընդհատ մտածում էր հայերին եվրոպական, այսպես կոչված լուսավորության տարածման միջնորդ դարձնելու մասին: Նալբանդյանը ասում է, որ իր դավանանքն է ճնշված ազգերի ազատագրումը, ազգերի հավասարությունը և մարդկային համերաշխությունը:

Նալբանդյանը շատ լավ գիտակցում էր, որ տնտեսական հարցի ուսուցիցին լուծման և ազգերի համերաշխության գործին մեծապես վնասում է բուրժուական նացիոնալիզմը, ուստի ամեն առիթով ուժգին հարվածներ էր հասցնում դրան: Դրա բնորոշ փաստերից մեկն էր Նալբանդյանի՝ Պատկանյանի դեմ մղած բուռն գրական պայքարը, Պատկանյանի, որի մոտ նացիոնալիզմը երևան էր գալիս մերթ ազգային բացառիկության ու անցյալի իդեալականացման, մերթ անցյալի նիհիլիստական ժխտման և այլ արտահայտություններով:

Ռևոլյուցիոն խոշոր գրողն էր, և ոչ թե Նազարյանցը, որ սրա հետ միասին, չէր կարող աչքաթող տնել աշխատավորության տնտեսական հարցը լուծելու համար մղած ազատագրական պայքարի գործին նույնքան վնաս բերող ֆեոդալական-եկեղեցական խավարամոլությունը: 50—60-ական թվականների հայ ճեղհկապիր I 5

իչ մի գրող այնպիսի արդար ատելությամբ ու զայրությամբ լցված չի եղել կղերականության և կղերամտության դեմ, որքան Նալբանդյանը: Կղերական ռեակցիայի մարմնացումներ՝ Մխիթարյանների, Այվազովսկու, Չամուռճյանի, Գալֆայանի (Նար-Պեյ) և այլոց դեմ, մինչև իր վերջին շունչը պայքարեց Նալբանդյանը: Խորտակիչ սարկազմով մերկացնելով նրանց և նրանց նմանների գործունեության հակաժողովրդական, հակառուլուցիոն էությունը:

Նալբանդյանը մարտնչող մատերիալիստ էր, իդեալիզմի հակառակորդ: Իդեալիստական փիլիսոփայական սիստեմների մասին խոսելիս նա ցույց է տալիս, որ դրանք հասարակության ռեակցիայի, պահպանողական խավերի հետ են կապված ու խիստ բացասական նշանակություն ունեն հասարակական պրոգրեսի համար: Այն ժամանակ, երբ հայ լիբերալիզմի հրապարակախոս Նազարյանցը հետևողականորեն պաշտպանում էր իդեալիզմը, ռուլուցիոն դեմոկրատ Նալբանդյանը դարձավ հայ մատերիալիստական փիլիսոփայության հիմնադիրը:

Մեծ է Նալբանդյանի երախտիքը հայ քննադատական մտքի պատմության մեջ, նա հանդիսացավ հայ մատերիալիստական էսթետիկայի և ռուլուցիոն դեմոկրատական քննադատության հիմնադիրը և ամենախոշոր ներկայացուցիչը:

Այսպես թվարկելով, անկասկած, անհնար է Նալբանդյանի մեծության չափը սպառել: Իրոք շատ մեծ է նրա՝ մեզ թողած ժառանգությունը: Եվ այն բոլոր գրականագետներն ու պատմաբանները, որոնք Նալբանդյանի ժառանգությունը այս կամ այն ձևով նսեմացնում են, և ուռցնում են լիբերալներին՝ վերագրելով նրանց շեղած արժանիքներ, մեր հասարակության համար իդեոլոգիական բացասական գործ են կատարում:

Մենք տեսանք, որ կոպիտ սխալ են գործում այն գրականագետները, որոնք Նալբանդյանի հյուսիսափայլյան շրջանի գործունեությունը մոտեցնում կամ նույնացնում են լիբերալ Նազարյանցի գործունեության հետ, իսկ որքան զայրացուցիչ է, երբ մեր գրականագետների ու պատմաբանների մեջ հանդիպում են այնպիսի մարդիկ, որոնք Նալբանդյանի ստեղծագործության և գործունեության հետ-հյուսիսափայլյան շրջանի մասին խոսելով, խոսքով ընդունում են նրա ռուլուցիոն-դեմոկրատ լինելը, բայց իրականում փորձում են ժխտել այն՝ դրանով մոտեցնելով և նույնացնելով նրան լիբերալիզմի հետ: Այսպես, օրինակ՝ «Հայ գրականության պատմության մի քանի հարցերի մասին» հոդվածի հեղինակ ընկեր Ոսկերչյանը համաձայն չէ այն բանի հետ, որ հայ գրականության պատմության առաջին գրքում՝ Նալբանդյանին նվիրված գլխում «Երկրագործությունը» վերլուծված է որպես շերտիշևսկիական հայացքների արտահայտություն, և ասում է, որ այդ գործում Նալբանդյանը «ջերմորեն պաշտպանում էր «Կոլոկոլ»-ի անհայտ թղթակցի հարձակումները Գերցենի դեմ»: Ընկեր Ոսկերչյանը գտնում է, որ «Նալբանդյանը «Երկրագործության» մեջ, իր քաղաքական փիլիսոփայական տնտեսագիտական հայացքներով, կապիտալիստական Արևմուտքի քննադատությամբ, Թյուրքիայի ու Ռուսաստանի բռնակալության նկատմամբ ունեցած անհաշտ դիրքով հիմնականում գտնվում է Չերնիշևսկու բանավորում, թեև առանձին դեպքում գյուղացիական ռեֆորմի գնահատության հարցում տուրք է տալիս Լոնդոնի պրոպագանդիստների հայացքներին»: Նախ, շատ տարօրինակ է Ոսկերչյանի այս դիտողությունը:

¹ Սովետական գրականություն և արվեստ, № 5, 1951, էջ 101,

նր նրանով, որ կարծում է, թե Նալբանդյանը իր նույն «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատության մեջ միաժամանակ որոշ հարցերում հետևում է Չերնիշևսկուն, իսկ տվյալ աշխատության բովանդակության համար գլխավոր հարցում, ռեֆորմի գնահատման հարցում, դեմ է Չերնիշևսկուն: Պարզ է, որ հենց այս միտքն է ցանկացել անցկացնել ընկ. Ոսկերչյանը, երբ ասում է, թե Նալբանդյանը «Գյուղացիական ռեֆորմի գնահատման հարցում տուրք է տալիս Լոնդոնի պրոպագանդիստների հայացքներին»:

Սակայն, նման ձևով Նալբանդյանի ռևոլյուցիոն դեմոկրատ լինելը իրականում ժխտելու «տեսակետը» ավելի բացահայտ ձևով և Ոսկերչյանից առաջ հայտնել են ուրիշները: Այդպես, այն շարադրված է նաև պրոֆ. Ռշտունու «Հայ հասարակական հոսանքները և 1861—64—70 թթ. գյուղացիական ռեֆորմը» աշխատության մեջ: Ընկեր Ռշտունին անհիմն հարձակվելով Շամիրին բացասաբար վերաբերվելու համար Նալբանդյանի վրա, այնուհետև վերլուծելով Նալբանդյանի «Երկրագործությունը», գտնում է, որ նա միայն ճիշտ կերպով «ներկայացնում է գյուղացիական ռեֆորմի ընթացքը Ռուսաստանում», «Բայց դժբախտաբար այստեղ էլ վերջանում է գյուղացիական ռեֆորմի մասին Նալբանդյանի տված ճիշտ պատկերը», գրում է ընկեր Ռշտունին և ապա շարունակում, թե «Խոսելով ճորտ գյուղացիներին շափավոր քանակությամբ հողով և փրկավճարով ազատելու մասին, Նալբանդյանն այդ հարցը փակված է համարում, այլևս այդ հարցին երբեք չի անդրադառնում, ո՛չ մի խոսքով չի առարկում ճորտերին ազատագրելու» կալվածատիրական, ինչպես Լենինն է ասում, «պրուսական» այդ եղանակի դեմ, դրան չի հակադրում ազատագրության ժողովրդական, գյուղացիական եղանակը Լենինի ասած «ամերիկյան» ուղին»¹:

Հարց է ծագում, էլ ինչի՞ հիման վրա է ընկեր Ռշտունին Նալբանդյանին ռևոլյուցիոն դեմոկրատ համարում, երբ գտնում է, որ Նալբանդյանը գյուղացիների ազատագրման ռևոլյուցիոն ճանապարհին դեմ է եղել, ռեֆորմի գնահատման հարցում Չերնիշևսկուն դեմ է եղել, պաշտպանելով Ռուսաստանի բուրժուական զարգացման «պրուսական» ուղին: Ընկեր Ռշտունին հիշատակելով Նալբանդյանի բերած Ռուսիայի ազնվականների խնդիրը ցարին, հենց այդպես էլ գրում է, թե «Նալբանդյանը և իր քաղաքական համախոհը նույնացնում են «հառաջընթաց ազնիվ կուսակցության», այսինքն լիբերալների և ժողովրդի պայքարը, լիբերալներին ժողովրդի գործի մարտիկ դարձնում...»² և որ Նալբանդյանը հնարավոր է համարել առանց «կացնի» լուծել հարցը վերևից. «ռեֆորմի» միջոցով, և որ նա այսպիսով գյուղացիական հարցի խնդրում երկրագործության մեջ դեմոկրատիզմից շեղում է կատարել դեպի լիբերալիզմը:

Հարկ չհամարելով այստեղ մանրամասնությունների մեջ մտնել, պիտի ասենք, որ ընկեր Ռշտունին ուղղակի հնարաստեղծել է իր այն թեզը, որ Նալբանդյանը խոսելով ճորտ գյուղացիներին շափավոր քանակությամբ հողով և փրկավճարով ազատելու մասին, հարցը փակված է համարել: Ընդհակառակը, Նալբանդյանը դրա մասին խոսել է՝ այն ռևոլյուցիոն քննադատության ենթարկելու համար և ենթարկել է: Հարցը նման ձևով պատկերացնելով, ընկեր Ռշտունին հիմնովին աղավաղել է «Երկրագործության» բովանդակությունը և Նալբանդյանի ռևոլյուցիոն դիմանկարը:

¹ Իրևանի Պետական համալսարանի Գիտական աշխատություններ, հատոր XIII, էջ 270—271:

² Նույն տեղում, էջ 274:

«Մարդուն համար վերևից եկած ազատությունը այն ցողից ավելի չէ, եթե մարդը նախ ինքը յուր մեջ աղատ չէ, և երկրորդ, եթե ինքը այնուհետև պիտի բռնանա յուր ընկերի վրա: Եվ քանի որ տնտեսական խնդիրը այն բազմակնճիռ Գորդիասի կապը լուծված չէ, հասարակությունը յուր ընկերական և ընտանեկան հարաբերությանց մեջ աղատ չէ, թող քառասուն անգամ, եթե կամենան, փոփոխեն կառավարության ձևը, բայց քանի որ հասարակության մի մասը տիրապետել է հողին, իսկ մյուս մասը մնում է մուրացիկ, այնտեղ թագավորում է բռնությունը»¹, գրում է Նալբանդյանը: Ինչպես կարող էր Նալբանդյանը ճորտատիրական ռեֆորմով հարցը փակված համարել, տնտեսական հարցը լուծված համարել, երբ հենց իր այս ամբողջ աշխատությունը դրել է տնտեսական հարցի լուծման լիրերայ ռեֆորմիստական ճանապարհի դեմ: Թող ընկեր Ռշտունին հիշի ֆրանսիական բուրժուական ռևոլյուցիայի լողունների քննադատությունը: «Ուրեմն ինչպիսի հավասարություն է այս, դու ունես այսչափ հող, իսկ ես ոչինչ... սեփականությունը այն բանի, որ առանց մեր աշխատության բնությունը դնում է մեր առջև գողություն է, ավազակություն և հափշտակություն» — գրում է Նալբանդյանը և սքանչելի տրամաբանությամբ ու հետևողականությամբ զարդացնում է տնտեսական հարցի լուծման իր տեսակետը, այն է՝ «գյուղացիական ռեֆորմի» դեմ ուղղված հողի հավասար բաժանության ու նրա ռևոլյուցիոն ճանապարհով, «կացնի» միջոցով, զենքի միջոցով լուծելու տեսակետը: Հողի «հավասարության գաղափարը, — գրել է Լենինը, — ամենառևոլյուցիոն գաղափարն է առհասարակ աբսուրդությունից հին կարգի — և հատկապես ճորտատիրական, խոշորակալված հին հողատիրության դեմ պայքարելու գործում»²: Այսպիսով, Նալբանդյանը «Երկրագործության» մեջ իր բուն կերպով արժարժված հողի հավասար բաժանության տեսակետով՝ ժամանակի ամենառևոլյուցիոն գաղափարի արտահայտիչն էր հանդիսանում, որով և նա իրրե հարազատի՝ կանգնում է մեծ Զերնիշևսկու կողքին:

Իրը խոսում ենք 50—60-ական թվականների ռևոլյուցիոն-դեմոկրատների և լիրերայների գնահատման հարցում եղած սխալ տեսակետների մասին, և հարկե այդ սխալները Նալբանդյանի և Նազարյանցի գնահատման վերաբերյալ եղած սխալներով չեն սպառվում. սխալներ կան և Ռաֆայել Պատկանյանի վերաբերյալ եղած կարծիքների մեջ: Այսպես, օրինակ՝ Նալբանդյանի երկերի ակադեմիական հրատարակության 2-րդ հատորի (1947) «Անվանական բառարան»-ում կարդում ենք. «Հայ բանաստեղծ. ծնվել է Ն. Նախիջևանում 1857 թվականին հրատարակեց «Ռոբինզոն Կրուզո»-ի թարգմանությունը. որի մասին Նալբանդյանը հատուկ ռեցենզիա զետեղեց «Հյուսիսափայլ»-ում ընդհանուր առմամբ դրականորեն արտահայտվելով Պատկանյանի աշխատանքի վերաբերյալ: Պատկանյանի բացասական վերաբերմունքը դեպի «Հյուսիսափայլ»-ը հիմք հանդիսացավ, որպեսզի նրա և Նալբանդյանի փոխհարաբերությունները լարված, նույնիսկ սուր բնույթ ստանա հետագայում»: Ինչպես տեսնում ենք, այստեղ ոչ մի խոսք չի ասված Նալբանդյանի և Պատկանյանի տարբեր դասակարգային դիրքավորումից բխող պայքարի մասին, այլ հարցն այնպես է դրված, որ Նալբանդյանը սկզբում դրականորեն է վերաբերվել Պատկանյանին, բայց «Հյուսիսափայլ»-ի սլաոհատով նրանց հարաբերություն-

¹ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, 3-րդ հրատ. էջ 56:

² Վ. Ի. Լենին, Երկեր, հատոր 13, էջ 206:

ները հետագայում լարվել են: Լիբերալներին ունեցություն դեմոկրատներին մոտեցնելու առավել ակնհայտ տենդենց կա, արդեն մի անգամ հիշված, ընկեր Ոսկերչյանի հայ գրականության պատմության հարցերի շուրջը գրած հոդվածում: Քննադատելով դասագրքի՝ Պատկանյանին վերաբերող գլխի թերությունները, ընկեր Ոսկերչյանն ինքն ավելի կոպիտ սխալ է գործում, առարկելով այն բանի դեմ, որ Պատկանյանը համարված է լիբերալ և նրա աշխարհայացքի մեջ քույր է տված բուրժուական ռեակցիոն նացիոնալիզմի առկայությունը: Իսկ ո՞րն է նրա կարծիքը Պատկանյանի մասին. «Պատկանյանը,— գրում է նա,— բարդ ու հակասական հեղինակ է... այստեղ մենք հնարավորություն չունենք խոսելու Պատկանյանի գրական ողջ ժառանգության սոցիալական դիմանկարի և աշխարհայացքի մեր ըմբռնման մասին. դա առանձին նյութ է, համենայն դեպս կարող ենք նկատել, որ Պատկանյանի պոեզիայի գլխավոր թեման ազգային ազատագրության հարցն է և լեյտմոտիվը՝ հայրենասիրությունը: Այդ գաղափարը հաճախ նրա մոտ ձուլվում է կրոնական ըմբռնումների ու եկեղեցու դերի բացառիկ նշանակության հետ, որը նրա հայացքներին մի շարք բանաստեղծությունների մեջ ռեակցիոն երանգ է տալիս»¹:

Քիչ հետո ընկեր Ոսկերչյանը թեպետ ընդունում է, որ Պատկանյանը ռեակցիոն նացիոնալիզմի շեշտ է մտցրել իր հայացքների մեջ, «բայց տիրապետողը, դերիշխող տրամադրությունը,— պնդում է նա,— եղել է, ոչ թե այդ ռեակցիոն նացիոնալիստական տրամադրությունը, այլ այն օբյեկտիվորեն դրականը, պրոգրեսիվը, որն արտահայտվել է նրա պոեզիայում և արձակում»²:

Այստեղ նախ և առաջ զարմանալին այն է, որ ընկ. Ոսկերչյանը, որը շատ է սիրում ուրիշներին խորհուրդներ տալ, քննադատել և պահանջել, որ գրողի աշխարհայացքի դասակարգային էությունը նշեն, ինքը բացարձակապես խուսափել է այդ անելուց, հայտարարելով, թե «դա առանձին նյութ է»: Ծիշտ է, նա ոչ մի բառ չի ասել, թե Պատկանյանը որ դասակարգի իդեոլոգիան է արտահայտել, բայց քանի որ ժխտում է Պատկանյանի լիբերալիզմը ու նացիոնալիզմը և հայտարարում է, որ նրա պոեզիայի լեյտմոտիվը հայրենասիրությունն է, այդպիսով նա ըստ էության Պատկանյանին որպես դեմոկրատ է ներկայացնում: Ընկեր Ոսկերչյանը ճիշտ և ճիշտ այդպես է վարվում նաև Բաֆֆու նկատմամբ: Նա անկասկած ուխավել է անտեսելով Պատկանյանի և Բաֆֆու մոտ նացիոնալիզմի էական լինելը և այդպիսով տուրք է տվել «միասնական հոսանքի» տեսությանը:

Առհասարակ «միասնական հոսանքի» կոնցեպցիան գրականության և պատմագիտության մեջ արտահայտվել է և այն ձևով, երբ բուրժուա-նացիոնալիստական գրողները իդեալականացվել են՝ ներկայացվելով որպես դեմոկրատներ, նույնացվելով դեմոկրատական աշխարհայացք ունեցող գրողների հետ: «Միասնական հոսանքի» կոնցեպցիայի այսպիսի արտահայտություն կա ընկեր Ասատրյանի ժողովածուի «Հակոբ Հակոբյան» հոդվածում. ավելի խոշոր չափով դա տեղ է գտել պրոֆ. Ա. Տերտերյանի հայ գրականության վերաբերյալ մի շարք աշխատություններում:

Հայ գրողների մասին երբ պրոֆ. Տերտերյանը խոսում է, չի ներկայացնում նրանց՝ հասարակական կյանքի, դասակարգային պայքարի պրոցեսների

¹ Սովետական գրականություն և արվեստ, № 5, 1951, էջ 103:

² Նույն տեղում, էջ 103:

հետ կապակցված. նա գրողների աշխարհայացքի և նրանց ստեղծագործությունների վերլուծումները կատարում է տվյալ պատմական ժամանակաշրջանի գրական-գաղափարական պայքարից համարյա բացարձակապես կտրված, որով նաև լայնորեն բաց է անում դռները ֆորմալիզմի առաջ:

«Միասնական հոսանքի» կոնցեպցիայի դրսևորման բացահայտ նմուշներից է նրա «Հայ կլասիկներ» ժողովածուի «Ալիշանը և հայրենասիրությունը» վերնագրով ուսումնասիրությունը: Ալիշանը անկասկած որոշ գրական դեր խաղացել է մեր նոր գրականության սկզբնավորման պատմության մեջ, բայց այն, ինչ վերագրում է նրան ընկեր Տերտերյանը. դա ոչ մի կապ չունի իրականության հետ և հանդիսանում է լիբերալիզմի իդեալիզացիայի մի արտահայտություն: Գնահատելով Ալիշանին որպես «60-ական թվականների մեծ էպոխան նախապատրաստողներից» մեկի, նա անխտիր նրա հետևորդներից է համարում այդ թվականների բոլոր գրողներին: Ընկեր Տերտերյանը միանգամայն անտեսել է Ալիշանի աշխարհայացքի մեջ նացիոնալիզմը, որը դրսևորվել է իբր ազգային սահմանափակության և ազգային սնապարծության քարոզ: Նրա կարծիքով, Ալիշանը իր էպոխայի «լավագույն մարդկանց դիտակետը» բարձրացած ժողովրդական հայրենասեր է, որը իր բանաստեղծություններով «ճշմարիտ ազգասիրությունը դարձնում էր ժամանակի դրոշմ»: Եվ ահա, երբ սկսում է լույս տեսնել «Հյուսիսափայլ»-ը ըստ Տերտերյանի, նրա մեջ «ճշմարիտ ազգասիրության նույն դրոշմը ամուր բռնում է նալբանդյանը»: Այսպիսով, ընկեր Տերտերյանը Ալիշանին դնում է նալբանդյանի կողքին, ավելի ճիշտ նույնացնում է նալբանդյանի ռեյտինգին դեմոկրատական հայրենասիրությունը Ալիշանի լիբերալ ազգասիրության հետ և նույնիսկ նրա հետևորդը համարում: Բայց Ալիշանի փառաբանումը նույնիսկ այս կետի վրա դեռ չի կանգնում: Ընկեր Տերտերյանը այնքան է հափշտակված նրանով, որ անգամ նրա ստեղծագործության մեջ տեղ գտած ֆեոդալական անցյալի գովերգությունը ներկայացնելով իբր բուրժուական ներկայից դժգոհության արտահայտություն՝ նրան հայտարարում է հայ ժողովրդի «գալիք բախտավոր ապագայի» երգիչ, «ժողովրդի իղձերի արտահայտիչ» և որ դրանց շնորհիվ ուժ և ներշնչում ստացած բանաստեղծը կարող էր Մայակովսկու նման ասել թե՛ «Արևը քորոց շինեմ և փողկապիս խրեմ»...

Առհասարակ պետք է նկատել, որ պրոֆեսոր Տերտերյանը նման ձևով հաճախ կորցնում է պատմականության ամեն մի ղեկավարություն և թույլ է տալիս իրեն ամեն առիթով, ամեն քայլափոխին այնպիսի համեմատություններ կատարել, որոնք նրա տեսակետները ոչ միայն չեն հիմնավորում, այլև կասկած են առաջացնում դրանց լրջության նկատմամբ: Այսպես, օրինակ՝ «Հայրենասեր կինը Մերենցի վեպերում» ուսումնասիրության մեջ խոսելով այն հարցի շուրջը. թե ինչ կարծիքներ ունենին Գյոթեն և Գորկին կանանց մասին, ընկեր Տերտերյանը գրում է. «Գյոթենի և Մաքսիմ Գորկու այս վեճի մեջ Մերենցի համակրանքը վերջինիս կողմն է, թե հայրենասիրությամբ նա նալբանդյանական է, կնասիրությամբ դորկիական է»:

Պրոֆ. Տերտերյանի աշխատությունների մեթոդոլոգիական այս ընդհանուր խոշոր թերությունը՝ վերլուծումները անվերջ համեմատությունների հղանակով առաջ տանելը, խիստ անդրադառնում է նաև նրանց գիտական արժեքի վրա: Դրականության պատմությունը ուղղակի աղավաղվում է, օրինակ՝ երբ «Րաֆֆիի Սամվել պատմական վեպը» հոգվածում Րաֆֆու այդ վեպը վերլուծում է տար-

րեր աշխարհայացքի տեր Մուրացանի «Գևորգ Մարգարետունի» վեպի հետ ան-
ընդհատ նույնացումներ կատարելով, անընդհատ ընդհանուր եզրեր նշելով:

Այս տեսակետից ավելի բնորոշ օրինակ է ժողովածվում տեղ գտած «Որ-
վանդ Օտյանի ստեղծագործությունը» աշխատությունը: Այդ մոլի բուրժուա-
կան լիբերալի երգիծաբանությունը ներկայացվում է անվերջ՝ լիբերալիզմի
ուժեղ հակառակորդներից մեկի՝ Պարոնյանի հետ ունեցած ստեղծագործական
սերտ կապի մեջ. եթե տարբերություններն էլ նշվում են, ապա շատ թույլ ձևով:
Միանգամայն արատավոր է ընկեր Տերտերյանի այն պնդումը, թե «Օտյանի
կապը Պարոնյանի հետ շատ ավելի սերտ է, քան որևէ այլ կապ և նմանու-
թյուն» և որ «երկու հեղինակների մոտ կան բազմաթիվ նմանություններ», որոնք
րխում են «միանման երգիծական թեքումից՝ հումորական երգիծանքից»: Տեր-
տերյանը չի նկատել, որ այստեղ կրկնել է իր հին սխալը՝ ժխտելով Պարոնյա-
նի սոցիալական սուր սատիրան, մի սխալ, որ նա մասամբ ուղղել է հետո
գրած «Պարոնյանի գեղագիտական հայացքները» գործում: Այսպիսով, պրոֆ.
Տերտերյանը նույն ժողովածուում Պարոնյանի մասին հանդես է եկել երկու
տարբեր կարծիքով:

Ընկեր Մալենկովը Սովետական Միության Կոմունիստական պարտիայի
19-րդ համագումարում իր զեկուցման մեջ նշեց, որ. «Մեր սովետական հասա-
րակության մեջ չկա և չի կարող դասակարգային բազա լինել բուրժուական
իդեոլոգիայի տիրապետության համար: Մեզ մոտ տիրապետում է սոցիալիս-
տական իդեոլոգիան, որի անխախտ հիմքն է կազմում մարքսիզմ-լենինիզմը:
Բայց մեզ մոտ դեռևս պահպանվել են բուրժուական իդեոլոգիայի մնացորդ-
ները, մասնավոր սեփականատիրական մորալի մնացուկները: Այդ մնացուկ-
ները իրենք իրենց չեն մեռնում, նրանք շատ կենսունակ են, կարող են աճել և
նրանց դեմ պետք է վճռական պայքար մղել»¹:

Զինված մարքսիզմ-լենինիզմով, մեր գրականագետները, պատմաբան-
ներն ու փիլիսոփաները պետք է անդուլ կերպով, մինչև վերջ բացահայտեն ու
հաղթահարեն բուրժուական «միասնական հոսանքի» կոնցենպցիայի բոլոր
տեսակի արտահայտությունները, որոնք, պետք է ասել, որ տեղ են գտել ոչ
միայն 50—60-ական թվականների հասարակական հոսանքների ու գրողների
բնութագրման մեջ, այլև անցյալի հայ գրականության պատմության մյուս
շրջաններին վերաբերող առանձին գիտական գործերում, և ստեղծեն հայ
ժողովրդի պատմության ու կուլտուրային վերաբերող գիտական գաղափարա-
կան լիարժեք նոր աշխատություններ:

¹ Գ. Մալենկով, Հաշվետու զեկուցում պարտիայի XIX համագումարում
ՍՄԿԳ հենտրոնական կոմիտեի աշխատանքի մասին, էջ 116: